ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/173

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ նախագահի աշխատակազմ
Մասնակից՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալոյանի, ներկայացուցիչ՝ Ա. Մկրտչյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ նախագահի աշխատակազմի 10.07.2020թ. թիվ ԱՂ-777-2020 գրության հիման վրա, 16.07.2020թ.-ին «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.07.2020թ.-ին:

17.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/173 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.07.2020թ.-ին, 31.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. <u>ՀՀ նախագահի աշխատակազմ ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ նախագահի աշխատակազմը 10.07.2020թ. թիվ ԱՂ-777-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթներից ելնելով՝ Ձեզ ենք տրամադրում Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ՝ «Բալոյան Եղբայրներ» և «Էլլիպս Ջիէյ» ՍՊ ընկերությունների տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԲԱԼՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն Հանրապետության Նախագահի աշխատակազմի կողմից հայտարարված ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ 08.07.2020թ. ներկայացրել է բողոք (բողոքի համաձայն «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն գտնում է, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերը իրավազոր չեն), որի 14.07.2020թ. ժամը 10:50-ին ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին տեղեկացել ենք Հանրապետության Նախագահի աշխատակազմի ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշմանը:

Համաձայն հանրապետության նախագահի աշխատակազմի ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 ծածկագրով բողոքի վերաբերյայ դիրքորոշմանը «Հանրապետության նախագահի աշխատակազմում գնումների համակարգող է սահմանված աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժինը, իսկ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրոկ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար է նշանակվել վերոնշյալ բաժնի պետ Հայկ Խաչատրյանը: 2020 թվականի հունիսի 22-ից մինչև հուլիսի 7-ը արձակուրդում գտնվելու ընթացքում Հայկ Խաչատրյանին հրամանով փոխարինել է նույն բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը». իսկ 16 հունիսի 2020թ. Հ-123-Ա հրամանը Հայկ Խաչատրյանին արձակուրդ տրամադրելու մասին է և հրամանի 2-րդ կետով ընդամենը ասվում է, որ արձակուրդում գտնվելու ընթացքում Հ. Խաչատրյանին

կփոխարինի Հանրապետության նախագահի աշխատակազմի ֆինանսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Սյուզաննա Սարգսյանը:

Ըստ ընթացակարգի բացման և գնահատման նիստի(երի) 22.06.2020թ. թիվ 2, 24.06.2020թ. թիկ 3, 01.07.2020թ. թիկ 4, 03.07.2020թ. թիվ 5 արձանագրությունների Հայկ Խաչատրյանը նիստերին չի եղել, իսկ վերոնշյալ արձանագրություններում և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը ստորագրվել է քարտուղարին փոխարինող Սյուզաննա Սարգսյանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 16-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:

Նույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում Լ գնահատող հանձնաժողով (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ թե գնահատող հանձնաժողովը և թե գնահատող հանձնաժողովի քարաուղարը նշանակվում է իրենց լիազորությունների կատարմանն են անցնում պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտի հրամանի հիման վրա: Այսինքն պատվիրատուի ընդունած հրամանը՝ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին, հանդիսանում է գնումները համակարգողի համար ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի լիազորությունները կատարելու պարտականության սահմանող միակ և բացառիկ իրավական ակտը:

Այսպիսով ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանում (քարտուղարի լիազորությունները կատարելու պարտականություն սահմանող միակ և բացառիկ իրավական ակտում) փոփոխություն չի արվել, հետևաբար հանձնաժողովի կողմից ընդունված «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, մեկ աշխատանքային օրով հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին որոշումը և այլն, որոշումները իրավազոր չեն և արդյունքում ոչ իրավազոր նիստերին կայացված որոշումների հիման վրա «Բալոյան Եղրայրներ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունը չունեցող մասնակիցների ցուցակում ներառվել չի կարող (ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ Կարգ) 26-րդ Կետի 2-րդ ենթակետի վերջին նախադասության համաձայն՝ Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ):»:

4. <u>ՍՑ-LO-2020/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ նախագահի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն:

iii. «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.07.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված, նշված չեն հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները: Հանձնաժողովը տեղեկացել է նաև, որ առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լուսաձայնային ազդարարը հասցեական չէ:

Նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որում պետք է նշվի հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի

քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

vi. Հանձնաժողովի 03.07.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ամբողջությամբ չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ չի ներկայացրել հրավերով սահմանված տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ ամբողջական տեղեկությունները, մասնավորապես՝ համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման ամբողջական տեխնիկական բնութագրերը:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը կազմված չեն հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, վերջինիս հայտը Հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել:

viii. Ընթացակարգի Հրավերով սահմանվել է, որ հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին:

ix. Հանձնաժողովի 12.06.2020թ.-ի նիստի թիվ 1 արձանագրությունը ստորագրվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանի կողմից:

x. Հանձնաժողովի կողմից կազմված մնացած՝ 22.06.2020թ.-ի թիվ 2, 25.06.2020թ.-ի թիվ 3, 01.07.2020թ.-ի թիվ 4 և 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրություններում և շահերի բախման բացակայության մասին հայտարարությամբ որպես քարտուղար նշվել է և ստորագրվել է փոխարինող՝ Սյուզաննա Սարգսյանի կողմից:

xi. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 04.08.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ առկա չէ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինելու մասին պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտ, որպիսի պայմաններում գտել է, որ Սյուզաննա Սարգսյանը սույն ընթացակարգի

շրջանակներում իրավասու չէր հանդես գալու որպես գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինող և իրականացնելու վերջինիս լիազորությունները՝ ստորագրելով նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ.-ի թիվ 2, 25.06.2020թ.-ի թիվ 3, 01.07.2020թ.-ի թիվ 4 և 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրությունները:

xii. Նույն որոշմամբ՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից թույլ են տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ գնումների համակարգող սահմանելու (փոփոխելու) և կազմավորելու համար սահմանող պահանջների խախտումներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությամբ նախատեսված մարմնում գլխավոր քարտուղարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության

Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել աշխատակազմի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, որտեղ պատվիրատուի ղեկավարը կարող է լինել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից լիազորված պաշտոնատար անձը,

Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումները համակարգող:

Կարգի 26-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով սույն կարգի 25-րդ կետով նախատեսված գրավոր հանձնարարականը կամ գնման հայտն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը, որը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

Նույն կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ: Գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ պատվիրատուի ղեկավարի հրամանով սահմանվում է գնումները

համակարգող, ով իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները (Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետ): Պայմանագրի կնքման գործընթացը կազմակերպելու նպատակով գնումների համակարգողը կազմում և գրավոր պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին հրամանի նախագիծը՝ հանձնաժողովի կազմավորման մասին ակտը, որով սահմանվում է գնահատող հանձնաժողովի կազմը՝ բաղկացած առնվազն երեք անդամից, նախագահից ու քարտուղարից: Գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը, իսկ հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ:

Ընդ որում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են յուրաքանչյուր նիստի արդյունքում ընդունված որոշումը (արձանագրությունը), որն էլ համարվում է գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մաս:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից կրակմարիչներ, հրդեհի հայտնաբերման և հրդեհի մարման համակարգերի ձեռքբերման նպատակով 12.06.2020թ.-ին հայտարարված «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1) թերի է կազմված եղել, նշված չեն եղել հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, առաջարկված կենտրոնական վահանակը չունի առնվազն 3000 մետր հասցեական գծի երկարություն, իսկ լոաձայնային ազդարարը հասցեական չէ:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ՝ հավելելով նաև որ՝ նշված անհամապատասխանությունները շտկելու համար անհրաժեշտ է, որ ընկերությունը ներկայացնի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), որում պետք է նշվի հրավերով սահմանված բոլոր տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ տեղեկությունները, մասնավորապես համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի

քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

«Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ն ամբողջությամբ չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այն է՝ չի ներկայացրել հրավերով սահմանված տեխնիկական նվազագույն պահանջների վերաբերյալ ամբողջական տեղեկությունները, մասնավորապես՝ համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, դրանում ներառվող սարքերի, սարքավորումների, նյութերի քանակներն ու դրանց, ինչպես նաև ծրագրային ապահովման ամբողջական տեխնիկական բնութագրերը, ինչով պայմանավորված վերջինիս հայտը Հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել:

Անդրադառնալով մասնակցի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ բարձրացված Հանձնաժողովի հրավիրված նիստերի իրավազորության հարցին և այդ հիմքով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի մերժմանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Ընթացակարգի Հրավերով սահմանվել է, որ հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանին:

Հանձնաժողովի 12.06.2020թ.-ի նիստի թիվ 1 արձանագրությունը ստորագրվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Խաչատրյանի կողմից:

Հանձնաժողովի կողմից կազմված մնացած՝ 22.06.2020թ.-ի թիվ 2, 25.06.2020թ.-ի թիվ 3, 01.07.2020թ.-ի թիվ 4 և 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրություններում և շահերի բախման բացակայության մասին հայտարարությամբ որպես քարտուղար նշվել է և ստորագրվել է փոխարինող՝ Սյուզաննա Սարգսյանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 04.08.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ առկա չէ «ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինելու մասին պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտ, որպիսի պայմաններում գտել է, որ Սյուզաննա Սարգսյանը սույն ընթացակարգի

շրջանակներում իրավասու չէր հանդես գալու որպես գնահատող հանձնաժողովի քարտուղարին փոխարինող և իրականացնելու վերջինիս լիազորությունները՝ ստորագրելով նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.06.2020թ.-ի թիվ 2, 25.06.2020թ.-ի թիվ 3, 01.07.2020թ.-ի թիվ 4 և 03.07.2020թ.-ի թիվ 5 արձանագրությունները:

Նույն որոշմամբ՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ ՀՆԱ-ԳՀԱՊՁԲ-20/63 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից թույլ են տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ գնումների համակարգող սահմանելու (փոփոխելու) և կազմավորելու համար սահմանող պահանջների խախտումներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ... գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 04.08.2020թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/62 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի 22.06.2020թ.-ին, 25.06.2020թ.-ին, 01.07.2020թ.-ին և 03.07.2020թ.-ին հրավիրված նիստերը իրավազոր չեն

եղել, ուստի դրանց արդյունքում կազմված համապատասխանաբար՝ թիվ 2, թիվ 3, թիվ 4 և թիվ 5 արձանագրությունները և ընդունված որոշումներն, այդ թվում՝ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն, իրավաչափ չեն:

Ուստի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10640-2020 գրությամբ «Բալոյան Եղբայրներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/173 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**